

U $\frac{ii}{347}$

08.00.02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՄԱԼՅԱ ՄՏՅՈՊԱՅԻ

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՄՏՔԻ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

Ը 00.02- «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում»
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում

Գիտական ղեկավար՝ ԳԳ ԳԱԱ ակադեմիկոս
Յուրի Միքայելի Սուվարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Ռոբերտ Ներսեսի Սարինյան
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Վիլեն Վիկտորի Խաչատրյան

Առաջատար կազմակերպություն՝ ԳԳ պետական կառավարման ակադեմիա

Պաշտպանությունը կայանալու է 2013 թվականի սեպտեմբերի 26-ին, ժամը 15³⁰- ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ԳԳ ԲՈՂ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Մ. Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թվականի օգոստոսի 23-ին:

014 Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր



Ա. Լ. Ասլանյան
Ա. Լ. Ասլանյան
11-347

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՅԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Հասարակական կյանքում տեղի ունեցող երևույթները հասկանալու համար դրանք, ամենից առաջ, պետք է դիտարկել պատմական զարգացման ընթացքում: Սա առավել ևս արդարացի է հանրային կառավարման ձևավորման և էվոլյուցիայի հիմնական օրինաչափությունների պարզաբանման համար:

Հայ կառավարչական մտքի ուսումնասիրությունը որպես գիտական խնդիր, համեմատաբար նոր երևույթ է: Այն կարևոր տեսական և գործնական նշանակություն ունի կառավարման ազգային համակարգի ձևավորման համար, որն իր մեջ ներառում է սեփական ազգամշակութային յուրահատկությունները և ձեռքբերումները:

Պետականակերտումը ենթադրում է ոչ միայն զարգացած երկրների փորձի ուսումնասիրում և ներդրում, այլև ուրիշ երկրների դրական փորձի ընկալում և իմաստավորում սեփական ազգամշակութային առանձնահատկությունները հաշվի առնելով: Հայաստանը պետական կառավարման սեփական և բավական հարուստ փորձ ունի, որը պետք է վերհանել և համադրել ժամանակի հրամայական պահանջներին:

Պետական իշխանության ամրապնդման հիման վրա Հայաստանում արդյունավետ կառավարման համակարգի ստեղծումը հնարավորություն կտա կառուցելու դինամիկ զարգացող, սոցիալական կողմնորոշմամբ տնտեսություն, զարգացած մարդկային ռեսուրսներով հարուստ պետություն: Դրա համար անհրաժեշտ է ուսումնասիրել հանրային կառավարման ոլորտի պատմությունը, օգտագործել դարերի ընթացքում կուտակված լավագույն փորձը:

Այսպիսով, միայն անցյալի և ներկայի կապի և համեմատության միջոցով է հնարավոր ավելի խորը և բազմակողմանի իմաստավորել հանրային կառավարման համակարգն ու նրա հաստատությունների նշանակությունն ու էությունը: Այս ընդհանուր մեթոդաբանական դիրքորոշմամբ՝ ատենախոսության մեջ փորձ է արվել հետազոտել Հայաստանում հանրային կառավարման զարգացման պատմությունը հնագույն ժամանակներից մինչև XVIII դարի առաջին կեսը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է հայ պատմիչների աշխատությունների հիման վրա հետազոտել և վերլուծել հանրային կառավարման հայեցակարգային և մեթոդաբանական հիմնախնդիրները:

Նշված նպատակի իրականացման համար ատենախոսությունում դրվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- ուսումնասիրել և վերլուծել հանրային կառավարման համակարգը և կազմավորման սկզբունքները Հին Հայաստանում,

➤ ուսումնասիրել և քննական վերլուծության ենթարկել հանրային կառավարման հիմնախնդիրները հայ պատմիչների և մտածողների աշխատություններում, մասնավորապես Սովսես Խորենացու, Ղազար Փարպեցու, Փավստոս Բուզանդի, Ագաթանգեղոսի, Մխիթար Գոշի, Դավիթ Ալավկաորդու, Սմբատ Սպարապետի, Ներսես Շնորհալու և Զակոբ ու Շահամիր Շահամիրյանցների,

➤ ուսումնասիրել Զին Զայաստանի պետական կառավարման գործառույթներն ու լիազորությունների պատվիրակումը:

Ատենախոսության ուսումնասիրության առարկան և օբյեկտը: Հետազոտության առարկան հանրային կառավարման հիմնախնդիրներն են և առանձնահատկությունները Զին Զայաստանում, իսկ հետազոտության օբյեկտը՝ հանրային կառավարման համակարգը՝ իր բաղադրատարրերով:

Ատենախոսության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտությունում առաջադրված խնդիրների լուծման տեսական հիմքն են պետական կառավարման, հանրային կառավարման, իրավագիտության, պետական կառավարման դասական և ժամանակակից տեսությունների հիմնական դրույթները, հայեցակարգերը, հանրային կառավարման համաշխարհային պրակտիկայում տեղ գտած բարեփոխումները, հայ և արտասահմանյան հետազոտողների հանրային կառավարման, հայ կառավարչական մտքի բնագավառում կատարած ուսումնասիրությունները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են համակարգային, խմբավորումների և համեմատական վերլուծությունների մեթոդներ:

Ատենախոսության հիմնական արդյունքները և գիտական նորույթը: Ատենախոսության հիմնական գիտական նորույթը բնութագրվում է հետևյալ արդյունքներում.

1. Վերլուծելով մասնագիտական գրականության մեջ հանրային կառավարմանն առնչվող մոտեցումները՝ տրվել է հանրային կառավարման հասկացության հետևյալ սահմանումը՝ «հանրային կառավարումը պետական կառավարման էվոլյուցիայի արդյունքում ձևավորված որակական նոր փուլ է, որի գոյության համար պարտադիր են քաղաքացիական հասարակության անբաժանելի մաս կազմող հաստատությունները, ժողովրդավարական պետության առկայությունը»:

2. Ատենախոսությունում V–XVIII դարերի ընթացքում հայ կառավարչական մտքի քննական վերլուծությամբ բնութագրվել է հայ մտածողների ներդրումը կառավարման տեսության զարգացման ասպարեզում:

3. Բնութագրվել են Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի Դատաստանագրքերում արտացոլված հանրային կառավարման հայեցակարգի սկզբունքները.

մասնավորապես՝ պետական կառավարման գործառնական, դատական, ճյուղային և տարածքային կառավարման հիմնարար դրույթները:

4. Զինավորվել է այն դրույթը, որ հայ կառավարչական միտքը միջնադարում իբրև հանրային կառավարման հիմնասյուներ դիտարկում էր պետությունն ու եկեղեցին, և դրանց կառավարչական գործունեության փոխլրացման վրա էլ հիմնվում է հասարակությունը:

5. Գնահատվել են Շահամիր և Զակոբ Շահամիրյանցների «Որոգայթ փառաց» աշխատությունում առաջարկվող երկրի խորհրդարանական կառավարման համակարգը, կատարվել պառլամենտարիզմի ժամանակակից դրույթների հետ վերլուծական համադրում:

Հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության գործնական արդյունքների նշանակությունն այն է, որ մշակված գիտատեսական ընդհանրացումներն ու առաջարկությունները կարող են օգտագործվել հանրային կառավարման մարմինների կողմից հայեցակարգային և ռազմավարական փաստաթղթեր մշակելու, պետական և մունիցիպալ կառավարման մասնագիտությամբ կադրերի պատրաստման ուսումնական գործընթացում, ինչպես նաև տնտեսության հանրային կառավարման արդյունավետության բարձրացման միջոցառումների մշակման ընթացքում:

Ատենախոսության տեսական և գործնական որոշ արդյունքներ կարող են օգտակար լինել պետական կառավարման տարբեր ճյուղերում ծառայողների, հանրային կառավարման մասնագետների վերապատրաստման և որակավորման բարձրացման համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնադրույթները և ուսումնասիրության արդյունքները քննարկվել են Զայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հակաճգնաժամային և զբոսաշրջության կառավարման և կառավարման ամբիոնների համատեղ միստերում: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունը արտացոլված են հեղինակի հրապարակած գիտական չորս հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսության կառուցվածքը պայմանավորված է առաջադրված նպատակներով և հիմնախնդիրներով, ուսումնասիրության առարկայով: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ծավալը կազմում է 134 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածությունում հիմնավորված են թեմայի արդիականությունը և քննարկվող խնդիրների լուծման հրատապությունը, ներկայացված են հետազոտության հիմնական նպատակներն ու առաջադրվող խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը, գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսության «*Հանրային կառավարման համակարգը և կազմավորման սկզբունքները*», վերտառությամբ առաջին գլխում հեղինակը ուսումնասիրել է հանրային կառավարման ելությունը, ձևավորման և արմատավորման էվոլյուցիան: Անցումային երկրներում պետական կառավարման գործընթացը շուկայական հարաբերությունների կայացման ու զարգացման համընթաց նոր բնույթ է ստանում, իսկ XX դարից զարգացած երկրներում արմատացած իրողություններին համապատասխան պետական կառավարումը վերածում է հանրային կառավարման: Հանրային կառավարման ելության լուսաբանմանը անդրադարձել են տարբեր հեղինակներ¹:


«Հանրային կառավարումը» ավելի ընդգրկուն հասկացություն է, քան «պետական կառավարումը», բացի պետական կառավարման համակարգից ներառում է նաև քաղաքացիական հասարակության անբաժանելի մաս կազմող այնպիսի հաստատություններ, ինչպիսիք են տեղական ինքնակառավարումը, հասարակական և քաղաքական կազմակերպությունները, զանգվածային լրատվության միջոցները, ինչպես նաև հանրային ծառայությունների ոլորտը:

Մասնագիտական գրականության մեջ հանդիպում ենք հանրային կառավարում («Public administration») տերմինի օգտագործման տարբեր մեկնաբանությունների, ինչը, թերևս, կապված է մասնագիտական տերմինաբանության պակասի հետ: «Public» բառը թարգմանաբար նշանակում է և՛ պետական, և՛ հանրային: Սակայն հայերեն բացատրական բառարաններում «հանրային» և «պետական» բառերին տրված են հետևյալ բացատրությունները, «հանրային» ամբողջ հասարակությանը վերաբերող, հասարակական, բոլորին՝ ընդհանուրին պատկանող, համայնական, «պետական» պետության հատուկ՝ վերաբերող²:

¹ Տե՛ս Մուվարյան Յու., Հանրային կառավարման տեսության և պատմության ուղվագծեր, Եր., ԱՌՏ, 2004, էջ 4: Օրդյան Է., Խուլզաբեկյան Ա., Շահբաջյան Վ., Հանրային կառավարման ինստիտուցիոնալիզացման ռազմավարական հիմնախնդիրները, «Տեղական ինքնակառավարման ինստիտուցիոնալացման հիմնախնդիրները ՀՀ-ում»: Գիտաժողովի նյութերի ժողովածու: Գիրք 5, Եր., Պետ. ծառայություն, 2002, էջ 8: Чуркин В., Публичное управление. М., Юристъ, 2004, с. 21.
² Տե՛ս Աճառյան Գ., Հայերեն արմատական բառարան: Հատոր է, Եր., 1935: Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Գ. 2, Եր., Հայաստան, 1976: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Խմբ. Գ. Ջահուկյան, Գ. 3, Եր., Հայկ. ՄՍՀ ԳԱ հրատ., 1974: Հայերեն բացատրական բառարան, Ստ. Մալխասյանցի խմբ., Գ 3, Եր., Հայպետհրատ, 1944:

Սահմանումներից պարզ է դառնում, որ եթե պետական կառավարման մեջ որպես սուբյեկտ հանդես է գալիս պետությունը, ապա հանրային կառավարման մեջ՝ հասարակությունը և նրա կառույցները: Հանրային կառավարումը հասարակության կառավարումն է հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ: Հանրային կառավարումը բնորոշում է ժամանակակից հասարակության զարգացման որակապես նոր փուլը: Հանրային կառավարման հայեցակարգի ուղնուծուծը այն գաղափարն է, թե պետությունն ու հասարակությունը կարող են լինել ոչ թե ընդդիմադիր, այլ գործընկեր³:

Ըստ գծապատկեր 1-ի պետության ձևավորման հետ առաջացել է պետական կառավարման համակարգը, որն էլ էվոլյուցիոն ձևով վերածել է հանրային կառավարման: Պետական կառավարում իրականացնողները քաղաքական գործիչներ են և պետական ծառայողները, իսկ տեղական ինքնակառավարումը՝ համայնքային ծառայողները:



Գծապատկեր 1. Պետական կառավարման էվոլյուցիան

³ Տե՛ս Սիրդոյան Վ., Հանրային կառավարման ելությունը // Օրենք և իրականություն, 2007թ., № 8, էջ 5-7:

Աստիճանաբար ձևավորվում են նաև ոչ կառավարական կազմակերպություններ՝ ՋԼՄ-ները, հասարակական կազմակերպություններն ու կուսակցությունները, որոնք հասարակության անունից իրականացնում են վերահսկողություն հանրային կառավարման մարմինների նկատմամբ:

Վ. Չիրկինի բնորոշմամբ հանրային կառավարումը կառավարման սուբյեկտի ազդեցությունն է հասարակության վրա, որն իրականացվում է համապատասխան գործառույթներով և լիազորություններով: Հանրային կառավարումը գիտություն է և արվեստ⁴: Ըստ Մ. Մարգարյանի հանրային կառավարման համակարգը հասարակության ինքնակազմավորման, ինքնավերարտադրման, ինքնաֆինանսավորման և այլ համակարգերի հետ համագործակցության ժամանակ ի հայտ եկած փոփոխությունները արդիականացնող ամբողջություն է⁵: Հանրային կառավարումը իշխանության և հասարակության միջև բաց համաձայնության գործընթաց է, ինչպես նաև խաղաղ գոյակցության միջոց⁶:

Հանրային կյանքը լավագույն ձևով կառավարելու համար անհրաժեշտ է, որ պետությունը իր կառույցներով և քաղաքացիական հասարակության հաստատությունները արդյունավետորեն համագործակցեն:

Առաջին գլխում ուսումնասիրվել է նաև հանրային կառավարման տեսակետից հետաքրքրություն ներկայացնող այն երկրների փորձը, որոնք համարվում են հանրային կառավարման ձևավորման և զարգացման բնօրրաններ՝ ԱՄՆ, որպես նախագահական հանրապետություն, Ֆրանսիան՝ կիսանախագահական հանրապետություն, Մեծ Բրիտանիան՝ խորհրդարանական միապետություն, ԳԴՀ՝ խորհրդարանական հանրապետություն: Ուսումնասիրվել է նաև Արևելյան Եվրոպայի երկրների հանրային կառավարման փորձը, որտեղ խորհրդային կարգերի քայքայումից հետո ձևավորվեցին կառավարման նոր համակարգեր:

Տարբեր երկրներում իշխանությունների տարանջատման ձևերը խիստ տարբեր են, տարբեր են նաև հանրային կառավարման դրսևորումները: Ակնառու է մի երևույթ. բոլոր երկրներում էլ իշխանության տարանջատման տեսությունը միտված է այն բանին, որ կանխի իշխանություններից մեկի գերազանցությունը մյուսների նկատմամբ:

Ատենախոսության *«Հանրային կառավարման հիմնախնդիրների քննական վերլուծությունը V–XII դարերում»*, վերնագրով երկրորդ գլխում ատենախոսը

⁴ Տե՛ս Чиркин В., Публичное управление. М.: Юрист, 2004, էջ 57.

⁵ Տե՛ս Մարգարյան Մ., Ժողովրդավարության համախմբումը որպես հանրային կառավարման համակարգի կայացման գրավական // Հանրային կառավարում, 2008, N 1, էջ 82-95:

⁶ Տե՛ս Белжева Н., Публичная политика России. сопротивление среды. Полис. 2007, N 1, էջ 22-32.

ուսումնասիրելով և քննական վերլուծության ենթարկելով հայ պատմիչների աշխատությունները, վերհանել է հանրային կառավարման հիմնախնդիրները V–XII դարերում: V դարի հայ պատմիչների՝ Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Ղազար Փարպեցու, Մխիթար Գոշի մոտ հանդիպում ենք ինքնիշխանության, ազատության, օրենքի գերակայության և այլ համամարդկային սկզբունքների գնահատման և ընդունման պահանջների: Որոշակի դեր է խաղացել այն հանգամանքը, որ մեր պատմիչներից շատերը ունեցել են կառավարման հարուստ փորձ՝ լինելով վանքերի ղեկավարներ:

Մովսես Խորենացին (410 – 495 թթ.), հիրավի, հայոց պատմագրության «հայրն» է: Նրա «Հայոց պատմությունը», ի թիվս այլ նյութերի, պարունակում է նաև տեղեկություններ, որոնք կարող են որոշակի պատկերացում տալ խորենացու կառավարչական հայացքների մասին: «Հայոց պատմությունը» ընդգրկում է հնագույն ժամանակներից մինչև Մեսրոպ Մաշտոցի մահը՝ 440 թ.: Խորենացին առաջինն է շարադրել հայոց ազգի ամբողջական պատմությունը, «Հայոց մեծերի ծննդաբանությունը» գլխում կազմել է հայ նահապետների և թագավորների ճյուղագրությունը:

Մովսես Խորենացին արտահայտել է զաղափարներ պետության ինքիշխանության, ազգային պետականության մասին: Հատուկ նշանակություն ունի Արշակունիների թագավորական տան ներկայացուցիչ Վաղարշակի՝ Հայաստանում գահակալման և պետության կազմավորման ուղղությամբ կատարած գործունեությունը: Այստեղ Խորենացին տեղեկություններ է հայտնում հին հայկական պետական ապարատի, արքունիքի, զորքի, արդարադատության մասին:

Խորենացին թագավորական կենտրոնաձիգ իշխանության կողմնակից էր: Պետության խորհրդանիշը թագավորն է: Թագավորը պետք է լինի պարկեշտ, մեծասիրտ, պերճախոս, իմաստուն, որովհետև դրանք կառավարչի կարևոր հատկանիշներից են: Հիշատակվում է «իմաստուն Շամբատ Բագարատը», որը պետք է «որդուց որդի» լիներ թագադրի Արշակունիների⁷: Համազասպ Մամիկոնյանին տալիս է «Հայոց նախարարների մեջ հինգերորդ գահը», ինչպես նաև գյուղեր և դաստակերտեր⁸: Նախարարների միջև վասալական պարտականությունների սահմանազատումը կարևոր է պետության մեջ կայունություն հաստատելու առումով: Խորենացու ամբողջ «Հայոց պատմության» մեջ նշում է, որ նախարարները ունեին ժառանգական տիրույթներ, և ստանում էին նաև «պարգևներ»:

Պատմիչը նկարագրել է տեղական կառավարման մարմինները: Թագավորը կարգավորում է քաղաքների, գյուղերի կառավարումը, «տերերն» նշանակում գավառներում և գյուղերում՝ «գյուղերի և գավառների ամուններով նրանց կոչելով»: Քաղաքա-

⁷ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, էջ 117:

⁸ Նույն տեղում, էջ 339:

շինությունը թագավորական բոլոր գործերի մեջ համարվել է «առաջին ու վեհագույնը»: Յուրաքանչյուր քաղաք ունեցել է «քաղաքապահ զորք» և «քաղաքի վերակացու», որն իրականացրել է քաղաքի կառավարումը⁹:

Խորենացին ուշագրավ տեղեկություն է հաղորդում կառավարչական ճիշտ որոշում ընդունելու հարցում: Թագավորը իր կողքին երկու մարդ է պահում, որոնցից մեկը պետք է «բարին» հիշեցնի, մյուսը՝ «վրեժխնդրությունը»: Թագավորը բարկության պահին, եթե ցանկանում է որոշում կայացնել կամ «անիրավ հրաման» տալ, ապա անմիջապես նրան հիշեցնում են «իրավացին և մարդասիրությունը»: Այսինքն՝ բարկության պահին թագավորը խուսափել է որոշում կայացնել, մի լուծում, որ արդիական է բոլոր ժամանակների համար:

Խորենացու «Չայոց պատմությունը» եզրափակող «Ողբ»-ը կարելի է դիտարկել որպես «հանրային կառավարման համակարգային ճգնաժամի արձանագրում»¹⁰: IV դարի վերջին քառորդից հայոց քաղաքական կյանքը արդեն զնուս էր դեպի անկում, չկար հզոր քաղաքական ուժ՝ դիմագրավելու արտաքին, կործանարար ուժերին, սկսած անկման առաջն առնելու: Այստեղ տրված է կառավարման կարևորագույն հիմնադրույթը, այն է՝ ամեն մեկը, լինի ղեկավար թե ենթակա, պետք է իր տեղում լինի, իր տեղին ու գործին համապատասխանի: Չայոց պետության մեջ խախտված է այդ պահանջը, խախտված է կառավարման բոլոր մակարդակներում:

Պա ամենից առաջ վերաբերում է պետական կառավարման ղեկի մոտ գտնվողներին. «իշխանները՝ ապստամբ, գողերին գողակից, կաշառակեր, կծծի, ժլատ, ազահ, հափշտակող, աշխարհ ավերող, աղտեղասեր», «կառավարիչները կարգ չեն պահպանում»:

Ճգնաժամի հետևանքով երկրում տիրում են համատարած անպատասխանատվությունն ու բարոյազրկումը: Խորենացին ցավ է արտահայտել աշխարհիկ և հոգևոր առաջնորդների վերացման համար, որովհետև վերջիններիս փոխադարձ համաձայնության վրա էր հիմնված հասարակության զարգացումը. «Ողբում են քեզ, Չայոց աշխարհ, ողբում են քեզ, բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնը, որովհետև վերացան թագավորդ ու քահանադ»¹¹:

Միավորելով աշխարհիկ և հոգևոր իշխանավորներին, Խորենացին, մասամբ շտկում է իր ելակետային աշխարհայացքային դիրքորոշումը: Նկատի է առնված այն, որ նախորդ ամբողջ շարադրանքի ընթացքում բոլոր իրադարձությունները, այդ թվում՝

⁹ Մովսես Խորենացի, էջ 347:

¹⁰ Տե՛ս Մովսեսի Յուրաքանչյուր քաղաք ունեցել է «քաղաքապահ զորք» և «քաղաքի վերակացու», որն իրականացրել է քաղաքի կառավարումը:

¹¹ Մովսես Խորենացի, էջ 447:

հայոց արքաների ու քահանայապետերի բախման դեպքերը նա նկարագրել ու գնահատել է գերազանցապես հոգևոր տերերի, եկեղեցու անվերապահ անսխալականության կանխադրությամբ¹²: Խորենացին պետության անկման պատճառ է համարում թագավորների՝ «անտանելի հրամաններ» արձակելը, կառավարիչների՝ կարգ ու կանոն չպահպանելը:

Բուզանդի «Պատմությունը» կարևոր աղբյուր է IV դարի հայոց պետության, նախաբարական տների և եկեղեցու հարաբերությունների, կենցաղի և բարքերի մասին: Բուզանդը անփոխարինելի աղբյուր է ոչ միայն պատմաբանների, բանասերների համար, այլ նաև պետական կառավարման պատմությունը ուսումնասիրողների:

Բուզանդը հանդես է գալիս որպես եկեղեցու հիմքերի ամրապնդման, եկեղեցու և հոգևորականության իրավունքների պաշտպան: Նա անհանդուրժող է պետական և քաղաքական այն գործիչների նկատմամբ, ովքեր հանուն հայկական ֆեոդալական պետության կենտրոնացման ու ամրապնդման փորձում են սահմանափակել հոգևորականության իրավունքները:

Փավստոս Բուզանդը հիշատակում է նաև նախարարությունների ու գործակալությունների՝ կենտրոնական գերատեսչությունների կառավարման մարմինների մասին: Ըստ Բուզանդի թողած տեղեկության կարելի է ենթադրել, որ Չայաստանում եղել է 900 գործակալ, որոնք ենթարկվել են թագավորի իշխանությանը:

«Պատմության» սկզբից Բուզանդը Պապին ներկայացնում է որպես բացասական կերպար, որին մայրը՝ Փառանձմեն թագուհին, նվիրել է «ղեներին»: Նա բազմաթիվ մեղքեր է գործում և անբարո կյանք վարում: Այդուհանդերձ, այսօրինակ ընկալումը խիստ միակողմանի է: Պապ թագավորը, ելնելով հայրենիքի շահերից, երկրի ներսում վարում էր պետության կենտրոնացման քաղաքականություն: Պետության հիմքերը ամրապնդելու համար նա բռնագրավեց եկեղեցական հողերի յոթ բաժնից հինգը, վերացնել տվեց եկեղեցուն տրվող տասանորդ հարկը, կրճատեց հոգևորականության թիվը, փակել տվեց բազմաթիվ վանքեր, կուսանոցներ և մենաստաններ, որտեղ կուտակվել էին մեծ թվով մարդիկ: Նշված հաստատություններից արտաքսվածներին «իր հպատակության էր ենթարկում»: Այս քայլով Պապ թագավորը ոչ միայն ամրացրեց իր և աշխարհիկ ավատատերերի իրավունքները, այլև մի քանի անգամ ավելացրեց պետական եկամուտները, ստվարացրեց և հզորացրեց հայոց բանակը:

Պապ թագավորի այս ձեռնարկումները իր ժամանակի համար ունեին առաջադիմական նշանակություն և ելնում էին պետության ու ժողովրդի շահերից:

¹² Տե՛ս Մովսեսի Յուրաքանչյուր քաղաք ունեցել է «քաղաքապահ զորք» և «քաղաքի վերակացու», որն իրականացրել է քաղաքի կառավարումը:

Անդրադառնալով իշխանավոր – ենթակա հարաբերություններին, Բուզանդը նշում է, որ ժողովուրդը պետք է հավատարմությամբ ծառայի իշխանավորներին, իսկ վերջիններս էլ լավ վերաբերվեն իրենց հավատակներին: Նա կոչ է անում պահպանել հավասարակշռություն իշխողների և ենթակաների միջև, յուրաքանչյուրին հիշեցնելով իրենց պարտականությունները:

Տիրասիրության օրինակ է Դրաստամատ մարդպետի արարքը, որը Պարսից Շապուհ արքայից իր կատարած ծառայության դիմաց հրաժարվում է «երկրներից, գավառներից, գանձերից» և ցանկանում է տեսնել Անհուշ բերդում շղթայված Արշակ թագավորին: Հայկական բանակի «միասիրտ հավատարմությունն ու տիրասիրությունը» զարմացնում է նույնիսկ թշնամուն: Հայկական զորքը պարսից Շապուհ արքան բնորոշում է «տիրասեր, միաբան և հավատարիմ»:

V դարի մեկ այլ պատմիչ Ղազար Փարպեցին անդրադարձել է Հայաստանի քաղաքական և եկեղեցական պատմությանը: Ղազար Փարպեցու «Հայոց պատմությունը» հայ կառավարչական մտքի կարևոր էջերից մեկն է, որտեղ արժեքավոր մտքեր են արտահայտված իշխանության, «ղեկավար – ենթակա փոխհարաբերությունների» կարգավորման մասին:

Փարպեցին դեռևս V դարում անդրադարձել է ղեկավարման միասնականության, անհատական շահերը ընդհանուր շահերին ստորադասելու սկզբունքների քննարկմանը: Հազվեթուի հղած դավանափոխության հրովարտակը մերժելու համար հավաքվեցին «Հայոց աշխարհի եպիսկոպոսները ըստ գավառների և պատվական երեցներ ու վանականներ» կամ «բոլոր նախարարներն ու սեպուհները, որ հավաքվել էին արքունիքում, միաբանված եկան Մամիկոնեից տեր և Հայոց զորավար Վարդանի մոտ ու նրան հայտնելով միաձայն արած խորհուրդը, պատմեցին իրենց ամենայն դիտավորությունները, կատարվելիքի մասին մտածումները...»¹³:

Հայոց սպարապետ Վահան Մամիկոնյանը պարսից արքային դիմում է ենթակայի դիրքերից և պահանջում, նախ, հարգել ենթակային այնպիսին, ինչպիսին նա կա: Երկրորդ, ծիշտ գնահատեն մարդկանց: Երրորդ, ղեկավարի և ենթակայի շփումը կլինի արդյունավետ, եթե շփվեն ուղղակիորեն, այլ ոչ թե միջնորդավորված, եթե ստացված տեղեկատվությունը լինի հավաստի:

Քանի որ իրավունքը հանրային կառավարման հիմնասյուներից է, կարևոր է նաև եկեղեցական կանոնադիր ժողովների ուսումնասիրությունը: Ատենախոսությունում անդրադարձ է կատարվում հիմնականում Աշտիշատի (356 թ.), Շահապիվանի (444 թ.),

Աղվենի սահմանադիր ժողովների որոշումներին, որոնք կարևոր նշանակություն են ունեցել հասարակության հանրային հարաբերությունների կարգավորման համար:

Հայ ազգային եկեղեցական ժողովներում ընդունվում էին կանոնական իրավունքի նորմերը, որոնք թագավորական կենտրոնական իշխանության բացակայության պայմաններում կարգավորում էին նաև հասարակական հարաբերությունները: Այլ կերպ ասած՝ հայոց եկեղեցական ժողովները համազգային քաղաքական հաստատություններ էին:

Ատենախոսը անդրադարձել է նաև VIII դարի գործիչ Հովհաննես Օձնեցուն: Հայոց կանոնական միտքը (այդ թվում՝ հանրային կյանքին առնչվող կրոնական և աշխարհիկ կանոնները) ամբողջացնելու դերը բաժին ընկավ Հովհաննես Գ Օձնեցուն (Հայոց կաթողիկոս 717–728 թթ.): VIII դարի սկզբին նա եղած բոլոր նյութերը հավաքել և կազմել է մի ժողովածու, որը հայտնի է «Կանոնագիրք Հայոց» անունով: Հովհաննես Օձնեցին մեկ ժողովածուի մեջ ամբողջացրեց 24 կանոնախումբ, որոնք վերաբերում են դավանանքի և պաշտամունքի ծիսական խնդիրներին, ամուսնության, ընտանիքի և այլ հարցերի կանոնակարգմանը¹⁴: Նրանում տրվում են գործած մեղքի և կատարած հանցանքի, զանցանքի համար արգելքները: Սա ազգանպաստ գործ էր, որի հիմնական նպատակն էր հայ ժողովրդի քաղաքական միասնության վերականգնումը, հայ ժողովրդի և հայ եկեղեցու ինքնուրույնության պահպանումը:

Միջնադարյան Հայաստանի հայտնի հասարակական գործիչ էր Դավիթ Ալավկաորդին: Դավիթ Ալավկաորդին կարողացել է կանոնակարգել հասարակական հարաբերությունները և ներկայացնել հենց հասարակությանը: Նա արտացոլել է իր ժամանակաշրջանը և թողել արժեքավոր տեղեկատվություն: Դավիթը հայտնում է մտքեր, որոնք առաջադիմական էին ժամանակի համար, օրինակ՝ աշխատանքի պաշտպանության, ամուսնա-ընտանեկան, կենցաղային մաքրակեցության վերաբերյալ կանոնները:

XII դարի վերջին հայ ժողովուրդը թևակոխում է մի ժամանակաշրջան, երբ հնարավորություն է ստեղծվում վերականգնել հայկական պետականությունը, մի կողմից Ռուբինյանները՝ Հայաստանի հարավ-արևմուտքում, մյուս կողմից Ջաքարյանները՝ երկրի հյուսիս-արևելքում: Ջաքարյանների վերելքի շրջանում էլ Մխիթար Գոշը ձեռնամուխ եղավ «Դատաստանագրքի» կազմելուն:

Մխիթար Գոշը (1120–1213 թթ.) XII դարի երկրորդ կեսի – XIII դարի սկզբի հայտնի մտածողներից էր: Աղվանից Ատեփանոս Բ կաթողիկոսի հանձնարարությամբ 1184 թ. նա ձեռնամուխ է լինում Դատաստանագրքի շարադրելուն: Դատաստանագրքի ստեղծումը

¹³ Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, էջ 103, 117:

¹⁴ Տե՛ս ԳՄԻ, հատ. 5, եր., 1979, էջ 240:

համարվել է «համազգային նշանակություն ունեցող իրադարձություն, քանի որ արտացոլել է ժամանակի հասարակական, քաղաքական իրավիճակը»¹⁵: Գոշը կարողացել է ստեղծել «իր նախընթացը չունեցող և դարագուլխ կազմող մի ազգային օրենսգիրք»¹⁶: Գոշի Դատաստանագիրքը «ժամանակի հրամայական պահանջ է, գիտակցված անհրաժեշտություն, որով Մխիթարը իր ժողովրդին տվեց քաղաքական ամենօրյա պայքարի մի ազդու զենք»¹⁷: Գոշի մշակած կանոններն ու օրենքները համապատասխանում են հայ ժողովրդի իրավագիտակցությանն ու կենսակերպին, քանի որ անդրադառնում են և թագավորի, և եկեղեցու իշխանությունների հավասարությանը:

Կառավարման տեսության հիմնախնդիրները հայ մտածողների աշխատություններում տարբեր կերպ են մեկնաբանվել, ելնելով իրենց ապրած ժամանակաշրջանի առանձնահատկություններից: Նրանք բոլորի մոտ էլ առկա են հանրային կառավարման սահմերը, մասնավորապես տիրապետող տեսակետող է այն տեսակետը, որ պետությունն ու եկեղեցին են այն երկու հիմնասյուները, որոնց վրա հենվում է հասարակությունը:

Ատենախոսը անդրադարձել է նաև տվյալ դարաշրջանի պետական կառավարման գործառույթների և լիազորությունների պատվիրակման հիմնախնդիրներին: Թագավորական իշխանությունը հին և միջին դարերում իբրև բացարձակ իշխանություն՝ երկրի օրենսդիր մարմինն էր: Միապետի կամքը հավասար էր օրենքի:

Հայաստանի վաղ ֆեոդալական հասարակությունը ուներ հիերարխիկ բնույթ: Ֆեոդալական պետության զուգակցում էր թագավորը կամ արքան՝ Գլուխն երկիրն հայր, որն իրավունք ուներ հայտարարել պատերազմ կամ դաշինք կնքել, բանակցելու համար պատգամավորություն ուղարկել հարևան երկրներ և այլն¹⁸:

Արքունիքը պետական կառավարման շտաբային մարմին էր, բաղկացած թագավորի հարազատներից, մեծատոհմիկ ավագանու ներկայացուցիչներից: Ֆունկցիոնալ կառավարումը Հին Հայաստանում իրագործվում էր գործակալությունների միջոցով: Հիմնական գործակալություններն էին՝ Հազարապետությունը, Մաղխազությունը, Մարդպետությունը, Մեծ դատավարությունը, Սպարապետությունը, Թագակապ պապետությունը: Դրանցից բացի գոյություն ունեին նաև երկրորդական գործակալություններ:

¹⁵ Տե՛ս Պիվազյան Է., Մխիթար Գոշ: Հայ մշակույթի նշանավոր գործիչները 5-18-րդ դդ., Եր., Երևանի համալս. հրատ., 1976, էջ 278-294:

¹⁶ Տե՛ս Սուքիասյան Ա., Մխիթար Գոշը և «Հայոց Դատաստանագիրքը», Եր., Միւրք, 1965, էջ 48:

¹⁷ Տե՛ս Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի, Խ. Թորոսյանի առաջաբան, Եր., ՀԱԱՀ ԳԱ հրատ., 1975, էջ 6:

¹⁸ Տե՛ս Հայոց պատմություն: Գնագույն ժամանակներից մինչև մե դարեվերջ: Խմբ. Է.Լ.Գանիեյան, Եր., Անկյունաքար, 2000, էջ 79:

Արշակունիների անկումից հետո հիմնականում գոյատևեցին համապատասխան նշանակություն ունեցող գործակալություններ, հետագայում որոշ գործակալություններ վերահիմաստավորվեցին, իսկ պալատական ներ նշանակություն ունեցողները դադարեցին գործելուց: Որպես կանոն, գործակալությունները գլխավորում էին բարձր ավագանու ամենաազդեցիկ ներկայացուցիչները, իսկ պաշտոնավարումը ժառանգական բնույթ ուներ:

Արքունիքին կից գործում էր «Աշխարհաժողովը», որպես խորհրդատվական մարմին: Աշխարհաժողովը տարվա որոշ ժամանակներին հրավիրվում էր Հայոց թագավորի նախաձեռնությամբ և որին, նախարարների և այլ իշխանների հետ միասին, մասնակցում էր գյուղական համայնքների վերնախավը: Աշխարհաժողովը մշակում և ընդունում է բոլորի համար պարտադիր կանոններ, օրենքներ: Այստեղ ընդգրկված են եղել երկրի բոլոր դասերն ու խավերը: Աշխարհաժողովները հրավիրվում էին ինչպես արտակարգ, այնպես էլ սովորական պայմաններում:

Մեծ Հայքի տարածքային կառավարման մարմիններն են բղեշխները, նախարարները, քաղաքների կառավարիչները: Մեծ Հայքի թագավորության տարածքը բաղկացած էր 124 գավառից, որոնք ընդգրկված էին 22 ստրատեգիաների և արքունի տան՝ ոստանի մեջ¹⁹: Յուրաքանչյուր կողմնակալություն ուներ իր կառավարիչը՝ կուսակալը, բղեշխը, որին սկզբնական շրջանում նշանակում էր թագավորը, իսկ հետագայում այդ պաշտոնը դառնում էր տվյալ տոհմի ժառանգական արտոնություն:

Նախարարությունը պետական կառավարման հնագույն հաստատություններից է, զարգացման երկար ուղի է անցել: Նախարարությունը, որպես Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական կյանքի կազմակերպման առանցքային հաստատություն, հանընթաց վերափոխվել է հասարակության զարգացման հետ:

Նախարարության կազմակերպական առանձնահատկությունների ուսումնասիրությամբ զբաղվել են Ն. Ադոնցը, Հ. Մանանդյանը, Բ. Խալաթեանցը, Ս. Կրկյաշարյանը, Ա. Կոստանյանը, Ա. Փերիխանյանը, Ս. Երեմյանը և ուրիշներ²⁰: Նախարարը նախարարության կառավարիչն է: Նախարարները կատարում էին զինվորական և քաղաքացիական ծառայություն: Նախարարությունները Հին Հայաստանում կատարել են քաղաքական կարևոր դեր, եղել հայկական պետականության հիմքը:

¹⁹ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, Գ.1, Եր., ՀԱԱՀ ԳԱ հրատ., 1971, էջ 841:

²⁰ Մանանդյան տե՛ս Մանանդյան Հ., Ֆեոդալիզմը Հին Հայաստանում (Արշակունիների և մարզպանության շրջան), Եր., Հրատ. Մելքոնյան Ֆոնդ, 1981, էջ 10-11: Կրկյաշարյան Ս., Նախարարներն ու նախարարությունները Հին Հայաստանում //Արաբեր հասարակական գիտությունների, 1978, № 10, էջ 64: Ադոնց Ն., Հայաստանը Դուստիանոսի դարաշրջանում: Քաղաքական կազմությունը ըստ նախարարական կարգերի, Եր., Հայաստան, 1987, էջ 451: Խալաթեանց Բ., Մի կարծիք հայ նախարարության ծագման մասին, Պարիս, 1902, 11 էջ: Կոստանյան Ա., «Նախարար» տերմինի մասին //Պատմաբանասիրական հանդես, 1973, № 3, էջ 151-160: Периханян А., Древнеармянские востанки //Вестник древней истории. 1956. № 2, էջ 51.

Այսպիսով, նախարարության հաստատությունը հայոց պատմության հարյուրամյակների ընթացքում փոփոխության է ենթարկվել, սակայն պահպանել է նախնական նշանակությունը, այն է՝ երկրի ղեկավարի (թագավորի) կողմից նշանակվի բարձր պաշտոնյա, որը մասնակցում է երկրի գործադիր իշխանությանը:

Մեծ Հայքի քաղաքներում թագավորը նշանակում էր կառավարիչները: Գոյություն ուներ նաև քաղաքի կառավարման խորհրդակցական մարմին: Գյուղական համայնքները կառավարում էին համայնքների նշանակած ղեկավարները:

Քաղաքներում գործում էին քաղաքային վարչություններ, որոնք կազմված էին հիմնականում քաղաքի վերնախավի ներկայացուցիչներից: Քաղաքային վարչությունում քննարկվում էր քաղաքի ենթակայության, բնակչությունից զանձվող հարկերի, քաղաքի ամրությունները կառուցելու և վերականգնելու, ջրամատակարարման և այլ տեղական նշանակության հարցեր²¹:

Հայ Արշակունիների թագավորության պատմությունը լուսաբանող հնագույն փաստաթղթերից է «Գահնամակ» անունով վավերագրերը, որոնցից առաջինը կոչվում է Սահակյան կամ Վռամական գահնամակ, երկրորդը՝ Աղոնցի կողմից պայմանականորեն կոչված «Ձորանամակ» և վերջինը՝ «Ներսիսյան» կամ «կեղծ գահնամակ»: Հարցին անդրադարձել են նաև Սանանդյանը, Ն. Աղոնցը, Ս. Երեմյանը, Բ. Հարությունյանը²²: Գահնամակի պատմական հիմքը գահերեցության հաստատությունն է, որը ընդունված է եղել ինչպես Արշակունիների, այնպես էլ պարսից թագավորների արքունիքում:

Ատենախոսությունում ներկայացվել է նաև Բագրատունիների թագավորության պետական կառավարման համակարգը, թագավոր և նախարարներ հարաբերությունները, հողային հարաբերությունները, դատական համակարգը, տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները:

Այսպիսով, Հին Հայաստանում ձևավորվել է պետական որոշակի համակարգ, որն իր կառուցվածքով համապատասխանում է հանրային կառավարման տրամաբանությանը, սակայն, ինչպես նշվեց, այլ են պետական կառավարման մարմինների անվանումները և գործառույթները:

Ատենախոսության երրորդ «Հանրային կառավարման զարգացումը XIII-XVIII դարերում» գլխում քննարկվել են հանրային կառավարման հիմնախնդիրները Սմբատ

²¹ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն: Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում (IX դարի կեսերից մինչև XIV դարի կեսերը): Գ. 3, եր., ՀԱՍԳ ԳԱ հրատ., 1984, էջ 246:

²² Մանրամասն տե՛ս Մամանդյան Գ., Ֆեոդալիզմը Հին Հայաստանում (Արշակունիների և մարզպանության շրջան), եր., Հրատ. Մեյքոնյան ֆոնդ, 1981: Աղոնց Ն., Հայաստանը Դուստիանոսի դարաշրջանում: Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, եր., Հայաստան, 1987: Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, եր., 1963: Հարությունյան Բ., «Գահնամակի» քվարթան հարցի շուրջը // Դատնաբանասիրական հանդես, 1978թ., № 2, էջ 57-74:

Սպարապետի, Ներսես Շնորհալու, Հակոբ և Շահամիր Շահամիրյանցների աշխատություններում:

Ատենախոսությունում վերլուծվել են Կիլիկյան Հայաստանի հանրային կառավարման համակարգը, հայկական թագավորության ֆեոդալական աստիճանակարգությունը, դատական համակարգը, տեղական ինքնակառավարման համակարգը: Կիլիկյան Հայաստանի հանրային կառավարման համակարգի ուսումնասիրությունը կարևորվում է նրանով, որ բացահայտվում է հայ կառավարչական մտքի զարգացման ընթացքը:

Կիլիկիայի պետական կառավարման վերաբերյալ հարուստ տեղեկություններ է պարունակում Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը», որը հիմք է եղել Կիլիկյան Հայաստանի հանրային կառավարման համակարգի համար: «Դատաստանագիրք»-ը Կիլիկյան հայոց թագավորության «քաղաքական ինքնուրույնության խարտիան է»²³: Իր դասակարգային բովանդակությամբ այն իշխող դասի կողմից է, «հայկական պետության պաշտոնական և հիմնական օրենքը»²⁴:

Դիտարկվել է հանրային կառավարման առնչվող դրույթները Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքում»: Հանրային կառավարման առումով կարևոր է պետական կառավարման, իշխանության ձևերի, թագաժառանգման մեխանիզմի, թագավորի և հպատակների հարաբերության և այլ հարցերի մեկնաբանումը:

Թագավորը պետք է լինի «անաչառ, ճշմարիտ և առանց որևէ կաշառքի և առանց որևէ ծուլության, որը կարողանա բոլոր զրկվածների և զանգատավորների դատերը լսել և նրանց իրավունքները պահպանել»²⁵:

Թագավորը լիազորված է բարձրագույն իշխանությամբ և իրականացնում է՛ր օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունը: Նա գլխավորում էր նաև բարոնների խորհուրդը և ազնվականության գործերով գերագույն դատարանի նախագահին է: Թագավորին չեն կարող «խրատել կամ մահապատժի ենթարկել» առանց մեկ այլ թագավորի և երկրի հայրապետի իշխանները չեն կարող թագավորին պատժել: Երկրի ժողովուրդը ևս պետք է մասնակից լինի այդ գործողությանը: Միաժամանակ Դատաստանագիրքը սահմանափակում է թագավորի իշխանությունը: Այսպես, թագավորը կարող է զրկել իշխանական իրավունքից միայն այն իշխանին, որին ինքն է շնորհել այդ իրավունքը, իսկ այն իշխանները, որոնք իշխանական տիտղոսի են արժանացել մինչև արքայի թագադրվելը, առանց մյուս ֆեոդալների համաձայնության իրավունք չունեն զրկել օրինական իրավունքներից: Թագավորական գահի ժառանգման

²³ Տե՛ս Գալստյան Ա., Սմբատ Սպարապետ, եր., Հայպետհրատ, 1981, էջ 135:

²⁴ Տե՛ս Աուբիսյան Ա., Սմբատ Սպարապետ, Հայ մշակույթի նշանավոր գործիչներ 5-18-րդ դդ., եր., Երևանի համալս. հրատ., 1976, էջ 326-333:

²⁵ Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, եր., Իրավունք, 2008, էջ 33:

հարցում Սմբատը դրսևորում է առաջադիմական մոտեցում, ըստ որի գահը պիտի ժառանգի ոչ թե ավագ որդին, այլ արժանավորը, իսկ «եթե այլ ելք մնացած չլինի» նաև դուստրը:

Սպարապետը ընդունում է քազավորական և եկեղեցական իշխանությունը: Եկեղեցական իշխանության ոլորտներն էին հավատը, կրոնաբարոյականությունը, ամուսնաընտանեկան հարաբերությունները: Թազավորական իշխանությունը տարածվում էր հասարակական, իրավական բոլոր հարաբերությունների վրա:

Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքում» իշխաններին տրված են ժառանգական սեփականության իրավունք, որպեսզի նրանք «հզորանան և միաբան ուժ» հենարան լինեն քազավորին: Իշխաններն էլ պարտավոր են նման կերպ վարվեն իրենց «հպատակների և հարկատուների հետ» և ապրեն խաղաղ:

Կիլիկիայի հայոց պատմության համար Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը» Սահմանադրության դեր է կատարել, որը կարգավորում է պետական կառավարումը, կենտրոնական և տեղական իշխանությունների փոխհարաբերությունները, գույքային, ընտանեկան և մյուս իրավահարաբերություններ:

XII դարում ապրել և ստեղծագործել է դարի մեծագույն քաղաքական ու եկեղեցական գործիչ Ներսես Շնորհալին (1101–1173 թթ.), որի «Թուղթ ընդհանրական» աշխատությունը պարունակում է դրույթներ հանրային կառավարման, ղեկավարի կերպարի, սոցիալական արդարության վերաբերյալ:

Բնականաբար, իր ողջ գործունեությունը հիմք է տալիս ասելու, որ Շնորհալին «հայոց ամենափառավոր հայրապետներից մեկն է, որն առաջինը հաստատ և որոշ ձև տվեց հայոց դավանության, հայոց ծիսակատարություններին՝ պատճառաբանություններով և խելացի դատողություններով»²⁶:

«Թուղթ ընդհանրականը» բաղկացած է երկու մասից, առաջինն ուղղված է հոգևորականությանը, իսկ երկրորդը՝ աշխարհիկ դասի ներկայացուցիչներին: Առաջին էջում, դիմելով իր երկտեսակ լսարանին, Շնորհալին փաստորեն, վկայում է հայ ժողովրդի սփռվածության հանգամանքը:

Վշխատության առաջին մասում Շնորհալին սահմանել է հոգևորականության ներկայացուցիչների համար նախատեսված վարքագծի կանոններ: Նա հորդորում է հոգևորականներին չզբաղվել աշխարհիկ գործերով, հոգատար լինել աղքատների և կարիքավորների նկատմամբ, հարբեցողությանը չտրվել, զերծ մնալ ստախոսությունից և չարախոսությունից: Եվ ընդհակառակը, նա գովաբանում է այն հոգևորականներին, որոնք հարստացնում են իրենց գիտելիքները և դրսևորում են առաքինի վարք:

²⁶ Տե՛ս Նեյիջ-Թանգյան Ն., Հայոց եկեղեցական իրավունքը, Ս.Էջմիածին, 2011, էջ 451:

Ներսես Շնորհալին, մեծ տեղ հատկացնելով կրոնի և եկեղեցու հանրային դերակատարմանը, միաժամանակ նշում է, որ միայն հավատով հնարավոր չէ իրականացնել մարդկանց կրթության ու դաստիարակությունը:

«Թուղթ ընդհանրականի» երկրորդ մասում Շնորհալին դիմում է աշխարհիկ դասի ներկայացուցիչներին՝ իշխաններին, քաղաքացիներին, երկրագործներին, որոնցից յուրաքանչյուրն ունի իր տեղն ու դերը հասարակության մեջ:

Յուրաքանչյուրին պետք է գնահատել և վարձատրել ըստ իր կարողության՝ պահպանելով արդարության սկզբունքը: Շնորհալին միաժամանակ հիշեցնում է. «Աղքատին քեզ անիծելու պատճառ մի տուր, որպեսզի քեզ չարիքով չհատուցի»²⁷:

Շնորհալին պայքարում է ավատատիրական հասարակարգում օրինականության պահպանման համար: Դիմելով իշխաններին՝ Շնորհալին պահանջում է արդարությամբ մարդկանց դատել, չդիմել կաշառքի օգնության: Շնորհալին փորձել է իշխաններին ուղղորդել, որպեսզի նրանք կարողանան օգտագործել իրենց ենթակաների հնարավորությունները: Իսկ քանի որ անհատների վարքի վրա ներագրելու լծակը նրանց պահանջմունքները բավարարելու հնարավորություն տալն է, հետևաբար իշխանները պետք է հաշվի առնեն իրենց ենթակաների պահանջները:

Իշխանավորի անձնային հատկանիշները նպաստում են նրա հեղինակության բարձրացմանը: Ահա Շնորհալու մոտ հանդիպում է շատ կարևոր մի հորդոր. «Ուամիկ մարդը, երբ ստում է կամ մի այլ վատ բան գործում, այնքան ակնհայտ չի լինում, ոչ էլ հրապարակայնորեն է նախատվում, իսկ մեծատունի պարագայում փոքր սխալն իսկ պատճառ է դառնում, որ մերձավորներն հայիոյեն և թշնամություն անեն»: Նրանք օրինակ են իրենց ենթակաների համար, ուստի և Շնորհալին զգուշացնում է. «Մեծերի պատվիրանազանցությունները առիթ են տալիս, որ չաը սիրողները չարության օրինակ առնեն նրանցից»²⁸: Շնորհալին կոչ է անում իշխաններին լինել համբերատար և «բարկությունից դրդված» որևէ որոշում չընդունել, որը կարող է ճակատագրական դեր խաղալ, այլ լինել օրինակաշատ և միասնական:

Հասարակության մեջ գոյություն ունեցող սոցիալական և իրավական անարդարությունների քննադատումը Շնորհալու աշխատության արժեքավոր կողմն է: Շնորհալին, վեր բարձրանալով միջնադարյան քրիստոնեական աշխարհայացքի մակարդակից, տեսնում է իրական կյանքը, այնտեղ գոյություն ունեցող անիրավությունները, բողոքում դրանց դեմ: Շնորհալու առաջադիմությունն այն է, որ նա խիստ քննադատության է ենթարկում հասարակության բոլոր խավերին²⁹:

²⁷ Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, Եր., Իրավունք, 2009, էջ 81:

²⁸ Սույն տեղում, էջ 85:

²⁹ Տե՛ս Հակոբյան Գ., Ներսես Շնորհալի, Եր.: Հայկ ՍՍՌ գիտ ակադեմիայի հրատ., 1964, էջ 212:

Ներսես Շնորհալի «Թուղթ ընդհանրականը» պահպանել է իր արդիականությունը, քանի որ անդրադառնում է կառավարման այնպիսի սկզբունքների, ինչպիսիք են կառավարչի հեղինակություն ու անհատական պատասխանատվությունը, աշխատանքի վարձատրության գործուն համակարգի ապահովումը, հանրային կյանքում կարգ ու կանոնի և արդարության հաստատումը: Ներսես Շնորհալու առաջնորդին, պետական և հոգևոր ծառայողի վարվելակերպին ներկայացվող պահանջները արդիական և ուսանելի են նաև օրերում:

XVIII դարի կառավարչական մտքի կարևոր սկզբնաղբյուր է Հակոբ և Շահամիր Շահամիրյանցների «Որոգայթ Փառաց» աշխատությունը: «Որոգայթ Փառացը» հայ կառավարչական մտքի լավագույն ստեղծագործություններից է:

«Որոգայթ փառացը» հայկական ապագա պետության համար նախատեսված սահմանադրություն է, որն անդրադարձել է պետության կառավարման ձևին, պետական կառուցվածքին, սոցիալ-տնտեսական և բազմաթիվ այլ հարցերի: Շահամիրյանցները առաջարկում են Հայաստանում ստեղծել հանրապետություն, որտեղ իշխում է օրենքը, որտեղ պաշտպանված են մարդու իրավունքներն ու անվտանգությունը: Այլ կերպ ասած՝ «Որոգայթ փառացը» ապագա հայկական պետության մոդելն է, ըստ որի այն պետք է լիներ խորհրդարանական հանրապետություն, որտեղ իշխանության բարձրագույն մարմինները կազմավորվում են ընտրությունների միջոցով: Շահամիրյանցների համար պետական կազմակերպության լավագույն ձևը հանրապետությունն է՝ որպես արդարության և առաջադիմության երաշխիք:

«Որոգայթ փառաց» աշխատությունը ուսումնասիրել են Յու. Սուվարյանը, Մ. Թելունցը, Գ. Սաֆարյանը, Կ. Խաչատրյանը, Գ. Հարությունյանը, Ռ. Համբարձումյանը, Կ. Միրունյանը և ուրիշներ: Բոլոր այս հետազոտողները շատ բարձր են գնահատել այս փաստաթուղթը՝ որպես «աշխարհում առաջին սահմանադրությունը»³⁰, «արժեքավոր իրավական հուշարձան»³¹, «քաղաքական մտքի հուշարձան»³², «համաշխարհային մշակույթի, համաշխարհային իրավաքաղաքական մտքի հազվագյուտ գլուխգործոց»³³, «հասարակական-քաղաքական մտքի փայլուն հուշարձան»³⁴:

«Որոգայթ փառաց» աշխատությունը պարունակում է դրույթներ, որոնք կարևոր ավանդ են հայ կառավարչական մտքի զարգացման համար: «Որոգայթ Փառացը» բաղ-

³⁰ Տե՛ս Համբարձումյան Ռ., Որոգայթ փառաց: Ակունքները, այժմեականությունը և առանձնահատկությունները, Եր., Եժար, 1999, էջ 16:
³¹ Տե՛ս Սաֆարյան Գ., Հայ իրավաքաղաքական միտքը XI-XIII դդ., Եր., Արեգ, 1995, էջ 24:
³² Տե՛ս Միրունյան Կ., Քաղաքական ուսմունքների պատմություն, Եր., Ձանգակ-97, 2006, էջ 447:
³³ Տե՛ս Թելունց Մ., Հայկական առաջին սահմանադրությունը «Որոգայթ փառացը» և ԳԳ 1995 թ. Սահմանադրությունը, Եր., ԳԳ ԳԱ «Գիտություն» հրատ., 2001, էջ 71:
³⁴ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն: Հայ ժողովուրդը ֆեոդալիզմի վայրէջքի ժամանակաշրջանում XIV-XIV դդ., Գ. 4, Եր., ԳՍԳ ԳԱ հրատ., 1972, էջ 470:

կացած է ներածությունից և «Նշավակ: Կարգադրություն հայոց՝ Հայաստանյաց աշխարհի կառավարման համար» մասից: Ներածությունում հեղինակները, կատարելով պատմական անդրադարձ, շարադրում են պետական կառավարման հիմնական սկզբունքները՝ հնագույն ժամանակներից, հիմնավորում հայոց ազգային ազատագրական պայքարի անհրաժեշտությունը և հանրապետական կարգերի հաստատումը:

Հեղինակները բարձր են գնահատում օրենքի գերակայությունը. ոչ ոք իրավունք չունի իշխելու մարդու վրա, բացի օրենքներից: «Որոգայթ փառացը» հատուկ սահմանում է (գլուխ 15 և գլուխ 253), որ օրենքները պետք է ընդունվեն ժողովրդի կամքով, և բոլորը պետք է ենթարկվեն օրենքին: Օրենքը գերիշխող է, եթե այն ամբողջ ազգի կամքն ու շահերն է արտահայտում, այսինքն՝ ընդունվում է ողջ ազգի կամքով: «Որոգայթ փառացում» ներկայացված պետական կառավարման համակարգը հիմնված է քաղաքացիական հասարակության սկզբունքների վրա, որոնցից կարևորվում են օրենքի գերակայությունը, արդարությունը, մարդու իրավունքների հարգումը:

«Գառան վարք ունեցող հայոց ազգի վրա կարող է իշխել միայն Տեր Արարիչը: Իսկ օրենքով ընտրված «բազավորը» պետք է լինի «բարեպաշտ» և առաջնորդվի օրենքի իշխանությամբ, պետք է ծառայի ժողովրդին: Նա պետք է լինի «հայոց ազգի բերանը» և առաջնորդվի այնպես, ինչպես պատվիրում է «Հայոց տունն իր ծերակույտի կողմից՝ համաձայն օրենքի»: Օրենքների գործադրումը իրականացվում է «օրենսգետ խորհրդականների» միջոցով, որոնք պետք է կյանքի կոչեն բոլոր օրենքները և հետևեն դրանց ճիշտ իրականացմանը: Ժողովուրդը պետք է առաջնորդվի օրենքով ու արդարությամբ, և ընտրի «բարի, քաղցրահամ, դյուրամարս ու անխախտելի օրենքներ»:

Ապագա Հայաստանի համար անհրաժեշտ էր այնպիսի իշխանություն, որն արտահայտեր ընդհանուրի կամքը: Անհրաժեշտ է, որ ժողովուրդը հսկողություն սահմանի պետության գործունեության վրա, մասնավորապես՝ իրավունք ունենա փոխելու այն կառավարությունը, որը չի արտահայտում հասարակության շահերը³⁵:

Հեղինակները երազում են այն պահը, երբ մեր ազգը դուրս կգա «ծառայական վիճակից», կունենա պետության և «ըստ օրենքի վայելի իր կյանքը», իսկ ազատության համար պայքարը, «հայոց սեփական ժառանգությունը» ետ ստանալը համարում են արդարություն:

Տեսական բնույթի դատողությունները պարզաբանելով՝ հեղինակներն անցնում են առավել գործնական ուղղվածություն ունեցող Կարգադրություններին, որոնք «հաստա-

³⁵ Տե՛ս Գրիգորյան Գ., Շահամիր Շահամիրյան // Հայ մշակույթի նշանավոր գործիչները V-XVIII դդ., Եր., Երևանի համալս. հրատ., 1976, էջ 590:

տուն հիմք են մեր ազգի փրկության համար և միջոց՝ բարվոք կառավարելու հայոց ազգն ու աշխարհը»³⁶:

Կարգադրությունը բաղկացած է 521 գուխներից: Չենց առաջին գլխում տրվում է երկրի միասնականության և պետականության գաղափարը և նշվում, որ «Հայոց տունը» որպես պետական իշխանության բարձրագույն մարմին, պետք է կառավարի «Հայաստանյայց օրենքներով»: Երկիրը չպետք է պատերազմի և չպետք է թույլ տա նվաճվել օտարների կողմից: Կարգադրության գլուխ 3-ը արտահայտում է մարդու իրավունքների և ազատության գաղափարախոսությունը, ըստ որի ոչ ոք իրավունք չունի իշխելու ոչ մեկի վրա, բոլորը անկախ ազգությունից և սեռից համահավասար են: Մարդիկ ունեն հավատքի ազատության, իսկ քրիստոնեության ուրացման դեպքում դատապարտվում են մահվան (գլուխ 5, 6): Յուրաքանչյուր հայ կարող է հավատարիմ մնալ իր «աստվածապաշտության հավատքին»:

Պետության օրենսդիր մարմինը կոլեգիալ, միապալատ Հայոց տունն է: «Որոգայթ Փառաց»-ում տրված են Հայոց տան ստեղծման կարգը, կառուցվածքը, լիազորությունները: Հայոց տունը ձևավորվում է երկաստիճան ընտրությունների միջոցով:

Շահամիրյանցները գնահատում են պետականությունը կորցնելուց հետո հայ կենտրոնացված իշխանության՝ եկեղեցու դերը հասարակության կյանքում: Եկեղեցին իրավունք ունի մասնակցելու երկրի հասարակական ու պետական կյանքին: Եկեղեցին և պետք է ներկայացուցիչ ունենար Հայոց տանը, բայց ի տարբերություն աշխարհականների, նրանք գործադիր թևում ներկայացուցիչ չեն կարող ունենալ: Հոգևորականների ընտրությունը ուղղակի է: Վերջիններս ունեն 2 ծայրի իրավունք՝ մեկ հոգևոր և մեկ՝ մարմնավոր:

Ընտրված փոխանորդների լիազորությունների ժամկետը 3 տարի է: Ժամկետը լրանալուց հետո ընտրողները իրավունք ունեն իրենց փոխանորդին վերալիազորել կամ ընտրել նոր փոխանորդներ (գլուխ 14): Ընտրելու և ընտրվելու իրավունք ուներ Հայաստանում ծնված, 18 տարեկան դարձած յուրաքանչյուր տղամարդ, ով ծնունդով Հայաստանից է և պատկանում է «Հայաստանյայց սուրբ եկեղեցուն»: Թեկնածուն պետք է լինի հարգված և պատվելի անձնավորություն: Ընտրվելու իրավունք չունեն կանայք և օտարազգները: Ինքնին հասկանալի է, որ Հայաստանը, շրջապատված լինելով մեծաքանակ մահմեդականներով, չէր կարող թույլ տալ, որ պետական պաշտոնյան լինի օտարազգի:

Ուշագրավ է օրենքների ընդունման ընթացակարգը: Օրենքները ընդունվում են չորս ընթերցմամբ, և միայն չորրորդում քվեարկում են: Յուրաքանչյուր փոխանորդ ունի

³⁶ Որոգայթ Փառաց, էջ 73:

մեկ ձայն, բացի Հայոց հայրապետից և Հայոց նախարարից, որոնք ունեն երկուական ձայն (գլուխ 17): «Նախարար» տերմինը այստեղ նոր բովանդակություն է ստանում: Նախարարը պետության ղեկավարն է, «առաջին պաշտոնատարը և հավատարիմ սպա սավորը մեր»: Օրենքը ընդունվում է մեծամասնության քվեով: Անհրաժեշտության դեպքում օրենքները կարող են փոփոխության ենթարկվել կամ ընդունվել նոր օրենքներ, եթե դրանց ժողովրդը հավանության է տալիս (գլուխ 231): Շահամիրյանցների առաջարկած պետական համակարգում չկա մի պաշտոնյա, որն իրավունք ունենա արգելանք դնելու Հայոց տան ընդունած օրենքի վրա, քանի որ վերջինիս գերակայության աղբյուրը ժողովուրդն է, և Հայոց տունը գործում է ժողովրդի անունից:

Հայոց փոխանորդների կեսը ստանում է համապատասխան պաշտոն, իսկ պաշտոն չստացածները դառնում են Հայոց տան տանուտեր, այսինքն՝ խորհրդարանի անդամներ: Ընտրություններից հետո յուրաքանչյուր գավառ պետք է ունենար իր ներկայացուցիչը և՛ օրենսդիր, և՛ գործադիր, և՛ դատական մարմիններում:

Գործադիր իշխանության բոլոր պաշտոնները տրվում են Հայոց տան կողմից՝ պաշտոնական հրամանով (գլուխ 18): Առաջինը ընտրում են նախարարի պաշտոնը (գլուխ 51): Նախարարը ղեկավարելու է գործադիր իշխանությունը: Նախարարը և խորհուրդը կազմում են կառավարության կազմը: Կառավարությունը ամբողջությամբ կազմվում է Հայոց տան կողմից և պատասխանատու է նրա առաջ, եթե խախտում է օրենքը: Մնացած դեպքերում ազատ է իր գործողություններում:

«Որոգայթ փառացը» ընդունում է նաև ժառանգական նախարարի ինստիտուտը (գլուխ 52): Այս դեպքում նախարարը կարող է լինել նաև իգական սեռի ներկայացուցիչ: Նախարարին կից գործող խորհրդի լիազորությունները սահմանափակվում են 3 տարով: Թեպետ այս կետով խախտվում է կառավարման հանրապետական ձևը, սակայն դա պայմանավորված էր քաղաքական իրավիճակով, ինչպես նաև անկախ պետություն ունենալու մեծ ցանկությամբ: Շեշտելով, որ եթե հայտնվի «Վաղարշակի և Բագրատի» սերունդից որևէ մեկը, Շահամիրյանցները նկատի են ունեցել Քարթլիի վրաց թագավոր Չերակլ II-ին, որը Բագրատունյաց տոհմի վրացական ճյուղի ներկայացուցիչ էր: Պատահական չէ, որ Շահամիրյանցները նրան են ուղարկում «Որոգայթ փառացի» օրինակը, հասկացնելով, որ եթե օգնի Հայաստանի ազատագրման գործին, ապա կարող է դառնալ Հայաստանի նախարար: Շահամիր Շահամիրյանցը հավատում է, որ «Չերակլը կարող է Հայաստանի հավաքողն ու ազատողը դառնալ»³⁷: Սակայն Չերակլը հայերի համար չարեց ոչ մի օգտակար քայլ: Ըստ Լեոյի, լինելով «կարմիր հեղափոխական»,

³⁷ Տե՛ս Լեո, Երկրի ժողովածու, Գ. 3, եր., Հայաստանի հրատ., 1973, էջ 378:

քաղաքականության մեջ Շահամիր Շահամիրյանցը մինչև վերջ մնաց «միամիտ ուտոպիստ»: Սա քաղաքական նկատառումներով կատարված քայլ էր:

Կարևոր համագամանք էր այն, որ և՛ ընտրովի, և՛ ժառանգական նախարարը կարող են ետ կանչվել: Ետ կանչումը կամ պաշտոնից ժամկետից շուտ հեռացումը կատարվում է Չայոց տան նախածեռնությամբ՝ համապատասխան հիմքերի առկայության դեպքում: Ժառանգական նախարարի մահից հետո իշխանությունը փոխանցվում է ավագ որդուն (զլուխ 56), իսկ մյուս որդիներին տրվում են սպարապետության, ասպետության և հրածագպետության պաշտոնները: Շահամիրյանցները պահպանում են ավագության սկզբունքը, որը եղել է Արշակունիների, Բագրատունիների և Ռուբինյանների ժամանակներում:

Նախարարի մահվան կամ պաշտոնակցության դեպքում նրա տեղը զբաղեցնում է երկրորդ խորհրդականը (զլուխ 94), որի պաշտոնավարության հրամանը տալիս է Չայոց տունը: Նախարարն ու Չայոց տունը բարձրագույն դատական ատյաններ են, որոնք իրավունք ունեն մահապատժի դատապարտվածին ներում շնորհելու, մահապատիժը այլ պատժատեսակով փոխարինելու:

Նախարարը պետք է լինի ազգությամբ հայ, քրիստոնյա, պատվելի ու զավառի տեր անձնավորություն, որը ընտրվելու է երեք տարի ժամանակով: Նրան կից գործելու է 12 մարդուց բաղկացած խորհրդակցական մարմին, որի անդամները ընտրվում են ցմահ (զլուխ 21): Խորհուրդը անվանվում է նաև «ծածուկ խորհրդարան», որի անդամները ևս կարող են ետ կանչվել:

Նախարարի գործունեության վրա իրականացվում է երկակի վերահսկողություն՝ Չայոց տան և նախարարական խորհրդի կողմից: Նախարարի հրամանները պետք է հաստատվեն խորհրդի կողմից, ինչը վկայում է, որ նախարարը չի կարող գործել միանգամայն ինքնուրույն:

Այնուհետև կազմվում է պետական կառավարման ապարատը: Ընտրվում են կառավարման ճյուղային մարմինների ղեկավարներ: Օրինակությունը պահպանելու համար ընտրվում է գլխավոր դատավորը (զլուխ 52): Երկրի զինված ուժերը ղեկավարելու համար ընտրվում է սպարապետը՝ իր երեք տեղակալներով (զլուխ 62): Բանակին սպասարկելու համար ստեղծվել են համապատասխան գերատեսչություններ՝ ասպետություն, զինվորապետություն, վառոդապետություն, վրանապետություն, հազարապետություն: Չայոց բանակը պետք է բաղկացած լիներ 90000 հոգուց և յուրաքանչյուր հազարյակի համար ընտրվում էր հազարապետ:

Չարկերի, մաքսերի, պետական եկամուտների կարգավորման համար ևս ստեղծվում է գերատեսչություն, որը կարգավորում է ֆինանսական հարաբերությունները

(զլուխ 75): Չարկեր են նախատեսված նաև պերճանքի առարկաների համար (զլուխ 399): Միաժամանակ նշվում է, որ պաշտոնյաները պետք է «օրենքով դյուրություն ստեղծեն ժողովրդի համար» (զլուխ 75), այսինքն՝ ապահովեն մեղմ հարկային դաշտ՝ «ի պաշտպանություն հասարակ ժողովրդի»:

Սոցիալական հարցերը միշտ էլ կարևորվել են հայ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների կողմից: Ապագա հայկական պետությունը պետք է ունենար սոցիալական ուղղվածություն: Պետությունը սոցիալական պարտավորություններ է կրում ժողովրդի նկատմամբ: Դա են վկայում մի շարք հոդվածներ զլուխ 157–159, 161–162, որոնք կարգավորում են սոցիալական ոլորտի բազմաթիվ հարցեր:

Փոխանորդները իրենց լիազորությունները ստանում են Չայոց տնից և կառավարելու են 3 տարի ժամկետով: Նրանց տրվում է «պաշտոնավարության հրաման», սակայն կարող են ետ կանչվել, եթե կատարել են հակաօրինական արարքներ: Մինչև պաշտոնի անցնելը պաշտոնյան պարտավոր է երդվել Սուրբ Կտակարանի վրա, «որ ջատագովն է լինելու Չայաստանյաց օրենքի» (զլուխ 34):

Չայոց տունը ղեկավարում են վիճակահանությամբ ընտրված երեք տանուտերերը, որոնք ընդունում են բոլոր պաշտոնյաների երդումը: Երեք տանուտերերից ընտրվում է Չայոց Չայաստանյաց (զլուխ 35), որը իրականացնում է Չայոց տան նախագահության կազմումը, փոխանորդներից երեք տանուտերերի ընտրությունը և երդում ընդունելը:

«Որոգայք» փառաքելը անդրադարձել է նաև տեղական ինքնակառավարման մարմիններին: Քաղաքները կառավարելու համար ընտրվում են կառավարիչներ՝ 60 անձ: Ենթադրվում է, որ ապագա Չայաստանը պետք է ունենար 60 վարչատարածքային միավոր: Տեղական ինքնակառավարման մարմինները կարող են հրամաններ արձակել, եթե դրանք չեն հակասում Չայոց տան օրենքներին:

Ընտրված տեղական ինքնակառավարման մարմինների հետ միասին տեղերում իրենց իշխանությունն են պահպանում նաև հայ տոհմիկ իշխանները: Ակնհայտ է, որ հեղինակները փորձել են չնեղացնել տոհմիկ իշխաններին, որոնք դեռևս մեծ իշխանություն ունեն:

Քաղաքը պետք է ունենա «չորս գերագույն իշխան»՝ քաղաքապետ, բերդապետ, զորագլուխ կամ զորքերի կառավարիչ, գերագույն դատավոր (զլուխ 518): Քաղաքապետը երեք խորհրդակիցներով կառավարելու է քաղաքը և նրա հետ՝ գավառներն ու գյուղերը: Նրանք կարգավորելու են ստացված եկամուտները և կատարվող ծախսերը: Դատավորը իր խորհրդակիցների հետ «պետք է դատի յուրաքանչյուր մարդկային բնություն» և առաջնորդի «ըստ Չայոց տան օրենքի»:

«Որոգայթ փառաց»-ում տրվում է այն գաղափարը, որ ամեն մարդ պետք է իր տեղում լինի: Հայրապետը, նախարարը, եպիսկոպոսը, տանուտերը, քահանաները, երկրի իշխանավորները՝ ոչ ոք ոչ մեկին իրենց դիրքին չվերաբերող հրաման չպետք է արձակի (գլուխ 364):

«Որոգայթ փառաց»-ի հեղինակներին հաջողվել է պետական համակարգում ապահովել այնպիսի սկզբունքների կիրառումը, ինչպիսիք են իշխանությունների տարանջատումը, օրենքի գերակայությունը, պետության սոցիալական ուղղվածությունը և ժողովրդավարությունը, որոնք չեն կորցրել իրենց արդիականությունը նաև XXI դարում: «Որոգայթ փառացը» լինելով պատմական փաստաթուղթ, հայկական պետականության գաղափարները ներկայացրել է ամբողջական և համակարգված ձևով, որոնք այսօր էլ մնում են արդիական:

Ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները և կարևոր եզրահանգումները:

1. Քաղաքացիական հասարակության կայացմանը և ժողովրդավարական, իրավական պետության ձևավորմանը զուգահեռ՝ առաջանում է հանրային կառավարումը՝ որպես պետական կառավարման էվոլյուցիայի շնորհիվ ձևավորված որակական նոր փուլ: Հանրային կառավարման համակարգը ընդգրկում է պետական կառավարումը՝ պետական ծառայությամբ և տեղական ինքնակառավարումը՝ համայնքային ծառայությամբ, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների, հասարակական միավորումների, ՀԼՄ-ների գործունեությունը:
2. Անկախացած բազմաթիվ պետություններ, այդ թվում Հայաստանը փորձում են ընդօրինակել զարգացած պետությունների կառավարման մոդելները՝ երբեմն պատշաճ չափով հաշվի չառնելով սեփական պատմական զարգացումը, որտեղ եղել են կառավարման համակարգեր, որոնք կարելի է ուսումնասիրել, ներդնել և զարգացնել: Քանի որ հանրային կառավարումը հասարակության կառավարումն է հասարակության հետ համատեղ, ապա հարկավոր է ուսումնասիրել պատմական անցյալը և, հիմք ընդունելով հայ մտածողների գաղափարները, կառուցել հանրային կառավարման ազգային համակարգ, որը կհամատեղեր հայկական և միջազգային լավագույն փորձը:
3. Պատմական Հայաստանում եղել է հանրային կառավարման որոշակի համակարգ, որն իր կառուցվածքով համապատասխանում է հանրային կառավարման տրամաբանությանը, սակայն դարերի ընթացքում փոխվել են պետական կառավարման մարմինների անվանումները և գործառույթները: Հին

Հայաստանի պետական կառավարումը զլխավորում էր թագավորն իր ինքնակալ իշխանությամբ, խորհրդակցական մարմնով՝ աշխարհաժողովով, գործառնական գերատեսչություններով՝ սպարապետություն, մեծ դատավարություն և այլն, կենտրոնական և տեղական կառավարման մարմիններով: Կառավարման տեսության հիմնախնդիրները հայ մտածողների աշխատություններում տարբեր կերպ են մեկնաբանվել՝ ըստ իրենց ապրած ժամանակաշրջանի առանձնահատկությունների: Այդուհանդերձ, նրանց բոլորի դատողություններում ամկա է հանրային կառավարման առանցքային գաղափարը, այն է՝ պետությունն ու եկեղեցին են այն երկու հիմնասյուները, որոնց վրա հենվում է հասարակությունը: Հանրային կառավարման հիմնախնդիրներն արծարծվել են նաև եկեղեցական կանոնադիր ժողովներում, որտեղ բացի հոգևոր հարցերից, քննարկվել են նաև այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են աշխարհիկ կյանքին: Եկեղեցին պետության հետ միասին կանոնակարգել է պետական կառավարման համակարգը:

4. Հանրային կառավարման հիմնախնդիրներին այս կամ այն կերպ անդրադարձել են հայ մտածողներից շատերը, ամենից առաջ՝ Սովսես Խորենացին, Ղազար Փարպեցին, Փավստոս Բուզանդը, Դավիթ Ալավկաորդին և ուրիշներ: Հայ պատմիչներին հիմնականում բնորոշ է ուժեղ կենտրոնացված պետություն ունենալու գաղափարը: Նկարագրելով իրենց ժամանակաշրջանը՝ պատմիչները վերհանել են և լուսաբանել այն հիմնախնդիրները, որոնք եղել են հանրային կյանքում:

Խորենացու «Ողբը» V դարի հայ հասարակության ամփոփ նկարագիրն է: Ղազար Փարպեցին, Փավստոս Բուզանդը անդրադարձել են կառավարման այնպիսի դրույթների, ինչպիսիք են ղեկավար-ենթակա փոխհարաբերությունները, ղեկավարի անձնական օրինակն ու հեղինակությունը: Հանրային համերաշխության գրավական պատմիչները համարել են արդյունավետ կառավարումը: Հատկապես ուշագրավ են Դավիթ Ալավկաորդու «Կանոնները», որոնք առաջին հայացքից լինելով պարզագույն, կանոնակարգել են հասարակական հարաբերությունները և հիմք դարձել հետագա ազգային Դատաստանագրքերի համար, մասնավորապես՝ Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի:

5. Հանրային կառավարման յուրօրինակ հայեցակարգ է մշակել XII դարի նշանավոր մտածող Մխիթար Գոշը, որի «Դատաստանագրքում» տեղ են գտել թե՛ եկեղեցական և թե՛ աշխարհիկ բնույթի հարցեր: Գոշը, աստվածաբանական դիրքերից, կողմնակից է եղել կենտրոնացված պետության, փորձել է ապագա հայկական

թագավորության համար հիմնավորել համապատասխան պետական կառավարման համակարգ: Գոչի առաջարկած դրույթները այնքան կենսունակ են, որ կիրառվել են նաև XVIII դարում:

6. Կիլիկիայի հայոց պատմության համար Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը» ունեցել է գործնական նշանակություն, կարգավորել պետական կառավարումը, կենտրոնական և տեղական իշխանությունների փոխհարաբերությունները, գույքային, ընտանեկան և հանրային այլ հարաբերություններ:

7. Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական» աշխատությունը այսօր էլ պետական ծառայողների համար նախատեսված բարոյախրատական կոդեքս է: Շնորհալին քննադատում է գոյություն ունեցող սոցիալական և իրավական անարդարությունները և, վեր բարձրանալով միջնադարյան քրիստոնեական աշխարհայացքի մակարդակից, տեսնում է իրական կյանքը, գոյություն ունեցող անիրավությունները և բողոքում դրանց դեմ: Սա է նրա աշխատության արժեքավոր կողմը: Ներսես Շնորհալու՝ առաջնորդին, պետական ծառայողի վարքին ներկայացվող պահանջները արդիական և ուսանելի են նաև մեր օրերում: Անհրաժեշտ է, կարծում ենք, մշակել պետական պաշտոնյայի բարոյական կոդեքս, որի հիմքում ընկած լինեն Ներսես Շնորհալու առաջ քաշած դրույթները:

8. «Որոգայթ փառացը», լինելով պատմական փաստաթուղթ, հայկական պետականության գաղափարները ներկայացրել է ամբողջական և համակարգված ձևով, դրանք այսօր էլ մնում են արդիական: Պետական պաշտոնյայի ընտրովիության ինստիտուտի առկայությունը «Որոգայթ փառացը» դարձրել է իր ժամանակի ամենաժողովրդավարական սահմանադրությունը: Ժողովրդավարության ապահովման կարևոր երաշխիքներից է նաև պետական պաշտոնյայի ետ կանչելու սկզբունքը, որը ևս, մեր կարծիքով, արժե կիրառել ներկայիս պետական կառավարման համակարգում:

9. Թեպետ պետական իշխանությունների նախածեռնությամբ ստեղծված Հանրային խորհուրդը զգալիորեն նպաստում է պետական քաղաքականության բափանցիկությանը, բնակչության իրազեկության մակարդակի բարձրացմանը, սակայն այս հաստատությունը չի կարելի համարել հանրային կառավարման լիարժեք կառույց, որովհետև նրա անդամները նշանակվում են երկրի նախագահի կողմից: Որպեսզի այն համապատասխանի ժողովրդավարական պետությանը, լինի հանրային կառավարման մարմին, հարկավոր է, կարծում ենք, որ խորհրդի

անդամները ընտրվեն հասարակության բոլոր խավերի ներկայացուցիչներից ուղիղ քվեարկությամբ:

Ընդհանուր առմամբ, հանրային կառավարման վերաբերյալ անցյալի հայ մտածողների աշխատություններում առկա դրույթներից շատերը պահպանել են իրենց արդիականությունը, կարող են ուղեցույց դառնալ հանրային կառավարման համակարգը կատարելագործելու և արդի պայմաններին համապատասխանեցնելու համար:

Ատենախոսության հիմնական դրույթներն իրենց արտացոլում են գտել հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Մանուկյան Ա. Ս., «Պետական կառավարման ճապրոնական մոդելը» // Հայաստան: Ֆինանսներ և էկոնոմիկա: Երևան, # 1 (127), հունվար, 2011, էջ 68:
2. Մանուկյան Ա. Ս., «Հանրային կառավարման էությունը», Միջազգային գիտաժողովի նյութեր: Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության տնտեսությունների նորաստեղծական զարգացման հիմնախնդիրները: Երևան-Դոնի Ռոստով, 2011, 28-30 հունիսի, էջ 580-583:
3. Մանուկյան Ա. Ս., «Աշխարհաժողովը Հին Հայաստանի հանրային կառավարման համակարգում» // Հանրային կառավարում: Գիտական հանդես, Երևան, # 1-2, 2012, էջ 42-49:
4. Մանուկյան Ա. Ս., «Հանրային կառավարումը ըստ «Որոգայթ փառաց» աշխատության» // Հանրային կառավարում: Գիտական հանդես, Երևան, # 4, 2012, էջ 38-48:

МАНУКЯН АМАЛИЯ СТЕПАНОВНА

ПРОБЛЕМЫ ПУБЛИЧНОГО УПРАВЛЕНИЯ В ИСТОКАХ АРМЯНСКОЙ
УПРАВЛЕНЧЕСКОЙ МЫСЛИ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – «Экономика, управление хозяйством и его отраслями».

Защита диссертации состоится 26-го сентября 2013г., в 15³⁰ часов на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете по адресу: 0025, г. Ереван, ул. М. Налбандяна 128.

РЕЗЮМЕ

Чтобы понять явления, происходящие в общественной жизни, надо их рассматривать в процессе исторического развития, т.е. как познавательное явление. В связи с этим формирование и эволюция публичного управления представляет интерес в контексте исторического развития.

Исследование армянской управленческой мысли как научной проблемы - сравнительно новое явление. Оно имеет важное теоретическое и практическое значение для формирования национальной системы управления, включающей в себя особенности и достижения своей национальной культуры. С точки зрения публичного управления особый интерес представляют полномочия высших органов власти Древней Армении, региональные и местные системы управления, Ашхаражохов как уникальное проявление демократического управления.

Для правильного восприятия и объективной оценки происходящих в течении времени событий, а также разработки теоретически-обоснованных концепций и перспективных проектов, необходимо также углубленное изучение прошлого. Каждая эпоха имеет свои восприятия публичного управления, которые могут стать основой для выявления национальных особенностей публичного управления, а также применения предыдущего опыта и национальных особенностей в целях повышения эффективности публичного управления.

Только посредством связи и сравнения прошлого и настоящего возможно наиболее глубокое и всестороннее понимание системы публичного управления, а также сути и значения его институтов. Исходя из этого, в диссертации была сделана попытка представить историю развития публичного управления с древнейших времен до первой половины XVIII века.

Основной целью диссертации является исследование и анализ концептуальных и методологических проблем публичного управления на основе работ армянских историков, предложения в результате изучения международного опыта исторически обоснованных механизмов публичного управления.

Для реализации данной цели в диссертации выдвинуты следующие основные задачи:

1. изучить и проанализировать систему публичного управления в Древней Армении и принципы её формирования,
2. изучить и критически проанализировать проблемы публичного управления в работах армянских историков и мыслителей, в частности Мовсеса Хоренаци, Лазара Парпеци, Павстоса Бузанда, Агатангехоса, Мхитара Гоша, Давида Алавкаорди, Смбата Спарапета, Нерсеса Шнорали, Акоба и Шагамира Шагамирянцев,
3. изучить функции государственного управления и делегирование полномочий Древней Армении.

Научная новизна результатов исследования состоит в следующем:

1. На основе анализа научных подходов публичного управления, отображенных в научной литературе, дана нижеследующая формулировка публичного управления: публичное управление – это качественно новый этап государственного управления, сформировавшийся в результате его эволюции, для существования которого необходимы институты гражданского общества и демократического государства.
2. В результате анализа армянской управленческой мысли V-XVII веков в диссертации был охарактеризован вклад армянских мыслителей в развитие теории управления.
3. В диссертации выявлены принципы концепции публичного управления, отображенные в Судебниках Мхитара Гоша и Смбата Спарапета, в частности, основные положения государственного, судебного, отраслевого и регионального управления.
4. Обосновано положение, согласно которому в средневековье армянская управленческая мысль рассматривала государство и церковь в качестве основы публичного управления, на которых и основывалось общество.
5. Оценена система парламентского управления государством, предложенная в работе «Западная честолюбия» Акоба и Шагамира Шагамирянцев, проведен сравнительный анализ с современными положениями парламентаризма.

MANUKYAN AMALYA STEPAN

PROBLEMS OF PUBLIC MANAGEMENT IN SOURCES OF THE ARMENIAN ADMINISTRATIVE THOUGHT

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the speciality 08.00.02 - „Economics, Management of the Economy and its Branches,,

The defense of the thesis will take place on September 26, 2013 at 15³⁰ o'clock at 014 Council of Economics of SCCA RA at Armenian State University of Economics: 128 M. Nalbandyan str., Yerevan, RA 0025.

ABSTRACT

For understanding the phenomena occurring in public life, it is necessary to consider them in the course of historical development, i.e. as the informative phenomenon. In this regard formation and evolution of public management is of interest in a context of historical development.

Research of the Armenian administrative thought as scientific problem - rather new phenomenon. It has important theoretical and practical value for formation of a national control system, including in itself features and achievements of the national culture. From the point of view of public management authorization of the supreme bodies of the power of Ancient Armenia, regional and local control systems, Ashkharazhokhov as unique manifestation of democratic management have particular interest.

The correct perception and objective assessment of events occurring during a time, and also development of theoretical and reasonable concepts and perspective projects, requires also profound studying of the past. Every era has the perceptions of public management which can become a basis for detection of national features of public management, and also application of the previous experience and national features for increase of efficiency of public management.

Only by means of communication and comparison of the past and the present the deepest and comprehensive understanding of system of public management, and also an essence and value of its institutes is possible. Proceeding their it, in the thesis attempt to present history developments of public management since the most ancient times to the first half of the XVIII century was made.

The main goal of theses is research and the analysis of conceptual and methodological problems of public management on the basis of works of the Armenian historians, offers as a result of studying of the international experience of historically reasonable mechanisms of public management.

For realization of this purpose in the thesis are put forward the following the main objectives:

1. to study and analyse system of public management in Ancient Armenia and the principles of its formation,
2. to study and critically to analyse problems of public management in works of the Armenian historians and thinkers, in particular Movses Khorenatsi, Lazare Parpetsi, Pavstos Buzand, Agatangekhos, Mkhitar Gosh, David Alavkaord, Smbat Sparapet, Nerses Shnorali, Aqaba and Shahamir Shahamiryants,

3. to study functions of public administration and delegation of powers in Ancient Armenia.

Scientific novelty of results of research consists in following:

1. On the basis of the analysis of scientific approaches of the public management displayed in scientific literature, the formulation of public management is given following: public management is the qualitatively new stage of public administration created as a result of it's evolution for which existence institutes of civil society and the democratic state are necessary.
2. As a result of the analysis of the Armenian administrative thought of the V-XVII centuries in the thesis was characterized the contribution of the Armenian thinkers in case of development of the theory of management.
3. In the thesis the principles of the concept of the public management, displayed in Codes of laws of Mkhitar Gosh and Smbat Sparapet, in particular, basic provisions of the public, judicial, branch and regional government are revealed.
4. Situation according to which in the Middle Ages the Armenian administrative thought considered the state and church as a basis of public management on which society was based is proved.
5. In the thesis estimated the system of parliamentary management the state, offered in the work of Hakob and Shahamir Shahamiryants „The Western Ambitions,, besides was given the comparative analysis with modern provisions of parliamentarism.

A. Manukyan

1. The first and most important principle of the theory of the state is the principle of the separation of powers. This principle is based on the idea that the legislative, executive, and judicial powers should be exercised by different branches of the government. This is done to prevent the concentration of power in one person or a small group of people, which could lead to tyranny and abuse of power.

2. The second principle is the principle of the rule of law. This principle states that everyone, including the government, is subject to the law. The law is the same for everyone, and no one is above it. This principle is essential for a democratic society, as it ensures that the government is held accountable to the people.

3. The third principle is the principle of the protection of individual rights. This principle states that the government has a duty to protect the rights of its citizens. These rights include the right to life, liberty, and property. The government should not interfere with these rights unless it is necessary to do so in the public interest.

4. The fourth principle is the principle of the separation of the church and state. This principle states that the government should not be involved in religious matters, and the church should not be involved in government matters. This principle is important for a democratic society, as it ensures that the government is not influenced by religious interests.

5. The fifth principle is the principle of the protection of the rights of minorities. This principle states that the government has a duty to protect the rights of minorities. This is important because minorities are often at risk of being oppressed by the majority.

6. The sixth principle is the principle of the protection of the rights of the poor. This principle states that the government has a duty to protect the rights of the poor. This is important because the poor are often at risk of being exploited by the rich.

7. The seventh principle is the principle of the protection of the rights of the disabled. This principle states that the government has a duty to protect the rights of the disabled. This is important because the disabled are often at risk of being discriminated against.

8. The eighth principle is the principle of the protection of the rights of the elderly. This principle states that the government has a duty to protect the rights of the elderly. This is important because the elderly are often at risk of being neglected.

9. The ninth principle is the principle of the protection of the rights of the young. This principle states that the government has a duty to protect the rights of the young. This is important because the young are often at risk of being exploited.

10. The tenth principle is the principle of the protection of the rights of the future generations. This principle states that the government has a duty to protect the rights of future generations. This is important because the actions of the government today can have a long-lasting impact on the future.

[Handwritten signature]

ՀՀ Ազգային գրադարան

NL0588384

